ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԻ
ՊԵՏԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

ՆՊԱՏԱԿ I. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 5

ՆՊԱՏԱԿ II. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 13

ՆՊԱՏԱԿ III. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՈՒՄ 23

ՆՊԱՏԱԿ IV. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆ 25

ՆՊԱՏԱԿ V. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 27

ՆՊԱՏԱԿ VI. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ 31

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 34

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 40

ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթղթում ներկայացվում է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի (այսուհետ՝ ՀԳՊԱ) 2017 թվականին իրականացրած գործունեության և ֆինանսական մուտքերի ու ծախսերի համառոտ հաշվետվությունը:

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի 2017-2021թթ. ռազմավարական ծրագրի համաձայն ՀԳՊԱ-ն ձգտում է դառնալ առաջատար և միջազգային մակարդակով մրցունակ արվեստի բուհ և ազգային մշակույթի զարգացման ու տարածման կենտրոն:

ՀԳՊԱ առաքելությունն իր մեջ ներառում է հետևյալ 4 հիմնական ուղղությունները.

- տրամադրել բարձրագույն կրթություն՝ իրականացնելով բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրեր արվեստի տեսության, կերպարվեստի, դեկորատիվ կիրառական արվեստի, դիզայնի և ճարտարապետության ոլորտներում՝ ակադեմիական և արդի մոտեցումների կիրառման, ստեղծագործական և կրթական գործընթացները հասարակական կարիքներին համապատասխանեցման միջոցով,
- նպաստել ազգային մշակույթի և տնտեսության զարգացմանը՝ պատրաստելով ազգային ու միջազգային մակարդակներում մրցունակ և բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ինչպես նաև հարատև կրթությանը պատրաստ քաղաքացիներ,
- զարգացնել արվեստի հետազոտությունը՝ նպաստելով գիտական մտքի և ազգային մշակույթի տարածմանը,
- ազգային արժեքների ձևավորմամբ նպաստել հասարակության համախմբմանը և գեղագիտական ճաշակի բարձրացմանը:

Իր առաքելությանն ուղղված գործունեության ընթացքում ՀԳՊԱ-ն արժեվորում է

համագործակցությունը հաստատության ներքին և արտաքին շահակիցների, ինչպես նաև **հասարակության** հետ՝ ծավալելով **թափանցիկ** և փոխադարձ **վստահության** վրա հիմնված գործունեություն: Բուհը կարևորում է **մշակութային բազմազանության և ստեղծարարության** վրա հիմնված կրթական միջավայրը՝ ապահովելով իր գործունեության **շարունակական բարելավումը և միջազգայնացումը**:

Առաքելությանը համապատասխան՝ 2017 թվականի ՀԳՊԱ-ի գործունեությունը միտված էր առաջընթաց գրանցելու հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Կառավարման համակարգի կատարելագործում
2. Արդի և մրցունակ կրթական ծրագրերի իրականացում
3. Հետազոտությունների իրականացում և դասավանդման հետ փոխկապակցում
4. Արտաքին կապերի ընդլայնում և շարժունության խթանում
5. Հասարակությանը մատուցվող ծառայությունների զարգացում
6. Որակի ապահովման համակարգի կատարելագործում և որակի մշակույթի ձևավորում

Վերը նշված ռազմավարական նպատակների ուղղությամբ 2017 թվականին ՀԳՊԱ-ում մշակվել և դեռևս մշակման փուլում են գտնվում մի շարք նոր կարգեր և այլ փաստաթղթեր՝ միտված բուհի իրավական կարգավիճակի և դրանից բխող կառավարման համակարգի փոփոխմանը, ինչպես նաև ուսանողների, դասախոսական և վարչական անձնակազմի էթիկայի կանոնների պահպանման ու շահերի բախման գործընթացների բարելավմանը:

Սույն փաստաթուղթը ներկայացնում է ՀԳՊԱ-ի գործողությունները և ֆինանսական հաշվետվությունը՝ ըստ ՀԳՊԱ 2017-2021թթ. ռազմավարական ծրագրի և ռեկտորի 2017 թվականի ընտրության հայեցակարգում նշված դրույթների:

ՆՊԱՏԱԿ I. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Արդյունավետ կառավարումը բուհի հաջողությունների կարևորագույն գրավականներից է: Բոլոնիայի գործընթացին անդամակցությամբ պայմանավորված միջազգային մակարդակում ՀՀ կրթությունը տեսանելի դարձնելու ձգտումը անհնար է դարձնում կառավարման հին մոտեցումների կիրառումը: Համալսարանների կառավարման արդիականացումը կրթական բարեփոխումների կայացման կարևոր նախապայմաններից մեկն է: Ինքնավարությունն ի սկզբանե կարևոր դեր է խաղացել Եվրոպայի Համալսարանների Ասոցիացիաի (ԵՀԱ) հռչակագրերում: Առաջնային է համարվում 2001 թվականին ընդունված Սալամանկայի հռչակագիրը: Սալամանկայի հռչակագրով կարևորվեց համալսարանական ինքնավարությանը նպաստող քաղաքականության մշակման անհրաժեշտությունը և առաջարկվեցին դրան ուղղված հետևյալ հիմնական սկզբունքները.

- հաշվետվողականությամբ և թափանցիկությամբ ուղեկցվող համալսարանների ինստիտուցիոնալ ինքնավարություն,
- հասարակական պատասխանատվության վրա հիմնված կրթություն,
- հետազոտական աշխատանքների վրա հիմնված բարձրագույն կրթության խթանում:

Ինստիտուցիոնալ ինքնավարություն ասելով, առաջին հերթին հասկացվում է ակադեմիական, կառավարման և ֆինանսատնտեսական գործունեության ազատականացում: Բուհերին այսօր անհրաժեշտ է ակադեմիական ինքնավարություն՝ իրենց բնականոն գործունեությունը կազմակերպելու համար: Անհրաժեշտ է ունենալ նաև ֆինանսավորման բազմազան և կայուն աղբյուրներ, ինչը կապահովի բուհերի կայունությունը և հնարավորություն կտա մրցակցության մեջ մտնել եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ:

Այսօր ՀՀ բարձրագույն կրթության առջև դրված հիմնական խնդիրը Եվրոպական տարածաշրջանում մրցունակ, բարձր որակի մասնագետների պատրաստումն է: Այս խնդրի լուծումը Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայից պահանջում է արդի լաբորատորիաների և արվեստանոցների, միջազգային և տեղական լայն կապերի ու համագործակցության, կերպարվեստի և դիզայնի ոլորտում արդի զարգացումներին ծանոթ, վերապատրաստված բարձր մակարդակի պրոֆեսորադասախոսական կադրերի առկայություն: Դժվարությունը կայանում է նրանում, որ ակադեմիայի ֆինանսական սահմանափակ միջոցները հնարավորություն չեն տալիս նախնական զգալի ներդրում պահանջող նշված բնագավառներում ապահովել շոշափելի զարգացում և այս խնդրի լուծման համար ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ են անհրաժեշտ:

Միևնույն ժամանակ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի նախկին կազմակերպաիրավական կարգավիճակը հնարավորություն չէր ընձեռում ձեռնարկատիրական գործունեություն ծավալել կամ որևիցե այլ ձևով արտաքին ներդրողների ներգրավել:

Նշված և այդ կարգի այլ սահմանափակումները վերացնելու նպատակով դեռ 2015 թվականից քայլեր են ձեռնարկվել ակադեմիայի ՊՈԱԿ կազմակերպաիրավական կարգավիճակը հիմնադրամի վերակազմակերպելու ուղղությամբ.

- 2015 թվականին՝
    1. Հարցը քննարկվել է կառավարման խորհրդի նիստում և ԵԳՊԱ ՊՈԱԿ-ը հիմնադրամի վերակազմավորելու հիմնավորումը և կառավարման խորհրդի արձանագրությունը ուղարկվել են ՀՀ ԿԳՆ:
    2. Մշակվել և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության նախագիծը, ինչպես նաև հիմնադրամին հատկացվող անշարժ գույքի ցուցակը, որոնք 2015 թվականի դեկտեմբերի դրությամբ ԿԳՆ-ի կողմից դրվել են շրջանառության մեջ՝ դրանցում առաջարկություններ և դիտողություններ կատարելու նպատակով:
- 2016 թվականին՝

1. Ամփոփելով գերատեսչական մարմիններից ստացված առաջարկությունները և դիտողությունները ՀՀ ԿԳՆ-ն դրանք վերադարձրեց ԵԳՊԱ՝ «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության նախագիծը վերջնականացնելու նպատակով:
2. Կանոնադրության նախագիծը վերամշակվեց և ԿԳՆ-ի կողմից կրկին դրվեց շրջանառության մեջ:

- 2017 թվականին՝
  1. ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի № 474-Ն որոշմամբ «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվեց՝ դառնալով «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ:
  2. ՀՀ վարչապետի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի № 1084-Ա որոշմամբ հաստատվեց «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի կազմը:
  3. 2017 թվականի հոկտեմբերի 25-ին կայացավ Հոգաբարձուների խորհրդի անդրանիկ նիստը, որի ժամանակ հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրվեց՝ Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական թեմի փոխանորդ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը, ինչպես նաև քննարկվեցին և հաստատվեցին «ՀԳՊԱ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգը» և «ՀԳՊԱ ռեկտորի ընտրության կանոնակարգը»: Իսկ 2017 թվականի դեկտեմբերի 1-ին կայացած Հոգաբարձուների խորհրդի նիստում ՀԳՊԱ ռեկտոր միաձայն ընտրվեց ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Արամ Իսաբեկյանը:

Իր նախընտրական խոսքում Ա. Իսաբեկյանը ՀԳՊԱ-ի հետագա զարգացման տեսակետից առավելապես կարևորեց.

1. Կառավարման համակարգի կատարելագործումը:

2. Արդի և մրցունակ կրթական ծրագրերի իրականացումը:
3. Հետազոտությունների իրականացումը և դրանց փոխկապակցումը դասավանդման հետ:
4. Արտաքին կապերի ընդլայնումը և շարժունության խթանումը:
5. Հասարակությանը մատուցվող ծառայությունների զարգացումը:
6. Որակի ապահովան համակարգի կատարելագործումը և որակի մշակույթի ձևավորումը:

Արդեն երկրորդ տարին է, ինչ կառավարման և հաշվետվողականության համակարգի բարելավման նպատակով ՀԳՊԱ-ում գործում է «ՀԳՊԱ տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ»-ը: Կարգի ներդրումը զգալիորեն մեծացրեց ակադեմիայի գործունեության արդյունավետությունը, առավել տեսանելի դարձնելով, որ այն ամբողջությամբ ուղղված է ռազմավարական նպատակների իրականացմանը: Հենց այդպիսին պետք է լինի իրական արդյունավետ կառավարման համակարգը: Կարգի ներդրումը նպաստում է ՀԳՊԱ-ում կառավարման և հաշվետվողականության նոր մշակույթի ձևավորմանը:

2017 թվականը չորրորդ՝ ամփոփիչ տարին է, ինչ ՀԳՊԱ-ն համակարգում և իրականացնում է «Կառավարում» դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում Եվրոպական մի շարք առաջատար բուհերի հետ համագործակցության շնորհիվ արդիականացվում են կառավարման մոտեցումները: Ծրագրի շրջանակներում ՀԳՊԱ-ի Եվրոպական գործընկերներն են.

- Լյուվենի համալսարանը (Բելգիա),
- Բաֆ Սպա համալսարանը (Մեծ Բրիտանիա),
- Կոբլենց-Լանդաուի համալսարանը (Գերմանիա),
- ԱՍԻԻՆ հավատարմագրման գործակալությունը (Գերմանիա):

«Կառավարում» ծրագրի նպատակն է փոփոխություններ իրականացնել բուհի կառավարման երեք մակարդակներում՝

- կառավարման վերին օղակ, վարչակազմ,
- դեկաններ և ամբիոնների վարիչներ,
- ուսումնական վարչություն:

Կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2015-2016 թվականների ընթացքում մշակվել և 2017 թվականից ներդրվում է «ՀԳՊԱ կառավարման տեղեկատվական (էլեկտրոնային) համակարգը», որը տեղեկատվության հավաքագրման և կառավարման հուսալի միջոց է: Այս համակարգի շնորհիվ կատարվող վերլուծությունները կարող են հիմք հանդիսանալ ճիշտ ժամանակին հավաքագրված և արժանահավատ տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու համար: Կառավարման էլեկտրոնային համակարգի օգտատերերն են.

- ՀԳՊԱ ղեկավարները,
- ուսումնական վարչության աշխատակիցները,
- մարդկային ռեսուրսների կառավարման բաժինի աշխատակիցները,
- հետազոտական կենտրոնը,
- դեկանատների և ստորաբաժանումների աշխատակիցները,
- ամբիոնների աշխատակիցները,
- պրոֆեսորադասախոսական անձնակազմը,
- ուսանողները:

Յուրաքանչյուր օգտատիրոջ համար համակարգում հասանելի է առանձնացված աշխատանքային էջ (ինտերֆեյս), որտեղ նրա իրավասություններին համապատասխան, առկա են համակարգի այն դաշտերը ու տեղեկատվությունը, որոնք անմիջականորեն առնչվում են վերջինիս աշխատանքային գործունեության հետ: Օգտատերը պատասխանատվություն է կրում իր գործունեությանը առնչվող տեղեկատվության մուտքագրման համար և անմիջական մուտքի իրավունք է ստանում իր լիազորությունների սահմաններում որոշումներ կայացնելու համար

անհրաժեշտ տեղեկատվությանը: Ամբողջովին ներդնելուց հետո համակարգը հնարավորություն կտա.

1. Ղեկավար և վարչական անձնակազմին (ըստ պատասխանատվության մակարդակի).
   - առցանց տարբերակով ստանալ ուսումնական գործընթացին առնչվող տեղեկատվություն,
   - առցանց վերահսկել ուսումնական գործընթացին առնչվող ստորաբաժանումների աշխատանքը,
   - ստանալ ուսումնական գործընթացին առնչվող ցանկացած տիպի հաշվետվություն՝ անհրաժեշտ ձևաչափով և այլն:
2. Պրոֆեսորադասախոսական կազմին.
   - առցանց վարել ուսանողի առաջադիմության էլեկտրոնային մատյանը,
   - ստեղծել, վերանայել, բարելավել և կիրառել առարկայական ծրագրերը և օրացուցային պլանները,
   - հաշվետվություն ներկայացնել իր ծանրաբեռնվածության վերաբերյալ և հետևել դասացուցակին,
   - տեղեկատվություն փոխանակել ուսանողների և գործընկերների հետ,
   - ունենալ անհատական միջավայր ուսումնական գործընթացին առնչվող նյութերն ապահով պահպանելու համար և այլն:
3. Ուսանողներին.
   - առցանց հետևել իր առաջադիմությանը, հաճախումներին, դասացուցակին, հիշեցումների համակարգին, կրթական ծրագրերին, ակադեմիական պարտքերին, ուսումնական պլանին և այլն,
   - տեղեկատվություն փոխանակել դեկանատի ու դասախոսների հետ,
   - օգտվել էլեկտրոնային գրադարանից,
   - ունենալ անհատական միջավայր ուսումնական գործընթացին առնչվող նյութերը պահպանելու համար և այլն:

Այս համակարգի լիարժեք ներդրումը մեծապես կնպաստի կառավարման համակարգի ավտոմատացմանը, որոշումների կայացման հիմնավորվածության մեծացմանը և թափանցիկության ու հաշվետվողականության մեծացմանը:

Ստեղծվել և կիրարկվում է նաև ՀԳՊԱ շրջանավարտների և գործատուների միջև կապի ձևավորման և ապահովման էլեկտրոնային հարդակը, որի բազայում արդեն իսկ գրանցված են 2013-2014 ուսումնական տարվա շրջանավարտների 97% (238 շրջանավարտ), 2014-2015 ուսումնական տարվա շրջանավարտների 84% (140 շրջանավարտ), 2015-2016 ուսումնական տարվա շրջանավարտների 80% (158 շրջանավարտ) և 2016-2017 ուսումնական տարվա շրջանավարտների 90.7% (165 շրջանավարտ) և գրանցումը դեռ շարունակվում է:

Ակտիվ աշխատանքներ են շարունակվում դրամաշնորհային ծրագրերի ուղղությամբ՝ միտված անձնակազմի ներուժի զարգացմանը: 2017 թվականի դրությամբ ՀԳՊԱ-ն մասնակցել է Տեմպուսի և Էրազմուսպլյուսի յոթ ծրագրերի, որոնցից երկուսի (ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ԻՆՔԼՈՒԺՆ) ղեկավարն է հանդիսանում: Դրանք են.

- ՏԵՄՊՈՒՍ - ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (GOVERN). միտված է Բոլոնիայի սկզբունքներին համապատասխան բուհերի կառավարման համակարգի վերանայմանը:
- ՏԵՄՊՈՒՍ - ՊԻԿԱՍԱ (PICASA). միտված է բուհի տարբեր գործընթացների միջազգայնացմանը:
- ՏԵՄՊՈՒՍ - ՎԵՐԻՏԱՍ (VERITAS). միտված է Զալցբուրգի սկզբունքների հիման վրա Որակավորումների ազգային շրջանակ-ի 8-րդ մակարդակի (հետազոտող) կառուցվածքային զարգացմանը:
- ՏԵՄՊՈՒՍ - ԸԼԱՅՆ (ALIGN). միտված է մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների ազգային շրջանակների միջև համապատասխանության խթանմանը:

- ՏԵՄՊՈՒՍ - ԷՍՊԱՔ (ESPAQ). միտված է ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավվածության բարձրացմանը:
- ԷՐԱԶՄՈՒՍՊԼՅՈՒՍ - ԻՆՔԼՈՒԺՆ (INCLUSION). նպատակ ունի նպաստել ներառական կրթության քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:
- ԷՐԱԶՄՈՒՍՊԼՅՈՒՍ - ՄՅՈԱ (C3QA). միտված է եվրոպական պահանջներին համապատասխանող բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի կրթական ծրագրերի որակի ապահովման համակարգի ստեղծմանը:

Ինչպես երևում է, ծրագրերը հիմնականում միտված են բուհի տարբեր ոլորտներում կառավարման զարգացմանը և բարեփոխումների խթանման համար լավագույն միջոց են:

ՆՊԱՏԱԿ II. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ա. Ուսանողների վիճակագրական տվյալներ

2017-2018 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով ընդունելությունը իրականացվել է ըստ ՀԳՊԱ-ի մասնագետների կողմից մշակված և ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված առաջադրանքների և գնահատման չափանիշների, որոնք հասանելի են ՀԳՊԱ-ի պաշտոնական կայքէջում: Մագիստրոսի կրթական ծրագրով 2017-2018 ուսումնական տարվա ընդունելությունը իրականացվել է ըստ «ՀԳՊԱ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ»-ի: Դիմորդների բաշխումն ըստ ՀԳՊԱ-ի, Գյումրու և Դիլիջանի ստորաբաժանումների հետևյալն է՝

Բակալավրի կրթական ծրագիր

Երևան	157
Գյումրի	31
Դիլիջան	3
Ընդամենը	**191**

Մագիստրոսի կրթական ծրագիր

Երևան	60
Գյումրի	11
Ընդամենը	**71**

Մրցույթի արդյունքում 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության տվյալները հետևյալն են՝

Բակալավրի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը
Երևան	50	101	151
Գյումրի	10	17	27
Դիլիջան	3	-	3
Ընդամենը	**63**	**118**	**181**

Մագիստրոսի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը
Երևան	18	25	43
Գյումրի	3	8	11
Ընդամենը	**21**	**33**	**54**

2017 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ՀԳՊԱ-ի ուսանողների ընդհանուր թիվը.

Բակալավրի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը
Երևան	186	438	624
Գյումրի	44	75	119
Դիլիջան	14	7	21
Ընդամենը	**244**	**520**	**764**

Մագիստրոսի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը
Երևան	35	33	68
Գյումրի	7	12	19
Ընդամենը	**42**	**45**	**87**

Վերջին երեք տարիների վիճակագրական պատկերը հետևյալն է.

Դիմորդների և ընդունվածների բաշխումն ըստ մասնաճյուղերի և ուսումնական տարիների

Բակալավրի կրթական ծրագիր						
	2015-2016		**2015-2016**		**2017-2018**	
	դիմած	**ընդունված**	**դիմած**	**ընդունված**	**դիմած**	**ընդունված**
Երևան	147	138	172	161	157	151
Գյումրի	35	35	31	31	32	27
Դիլիջան	7	6	4	4	3	3
Ընդամենը	***189***	***179***	***207***	***196***	***192***	***181***

Մագիստրոսի կրթական ծրագիր						
	2015-2016		**2016-2017**		**2017-2018**	
	դիմած	**ընդունված**	**դիմած**	**ընդունված**	**Դիմած**	**ընդունված**
Երևան	52	36	46	32	60	43
Գյումրի	5	5	8	8	11	11
Ընդամենը	***57***	***41***	***54***	***40***	***71***	***54***

Ուսանողների ընդհանուր թիվը ՀԳՊԱ-ում, Գյումրու և Դիլիջանի ստորաբաժանումներում ըստ կարգավիճակի (պետ. պատվեր / վճարովի)

Բակալավրի կրթական ծրագիր									
	2015-2016			2016-2017			2017-2018		
	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	Ընդամենը
Երևան	182	412	594	180	433	613	186	438	624
Գյումրի	47	106	153	48	88	136	44	75	119
Դիլիջան	15	6	21	14	6	20	14	7	21
Ընդամենը	***244***	***524***	***768***	***242***	***527***	***769***	***244***	***520***	***764***

Մագիստրոսի կրթական ծրագիր									
	2015-2016			2016-2017			2017-2018		
	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	Ընդամենը
Երևան	38	49	87	37	30	67	35	33	68
Գյումրի	5	5	10	7	6	13	7	12	19
Ընդամենը	***43***	***54***	***97***	***44***	***36***	***80***	***42***	***45***	***87***

ՀԳՊԱ-ի ընդհանուր ուսանողների թիվը

	2015-2016	2016-2017	2017-2018
Երևան	681	680	692
Գյումրի	163	149	138
Դիլիջան	21	20	21
Ընդամենը	***865***	***849***	***851***

Բ. Ուսումնական գործընթաց

Անդրադառնալով ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը՝ հարկ է նշել, որ զգալի աշխատանքներ են տարվել մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ: Այդպես, ՏԵՄՊՈՒՍԻ «Մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների ազգային շրջանակների միջև համապատասխանության ապահովում և ստուգում (ALIGN)» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մշակվել է «ՀԳՊԱ-ում մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկ»: Ձեռնարկն ուղղված է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում մասնագիտության կրթական ծրագրեր և առանձին դասընթացներ մշակող մասնագիտական խմբերին ու առանձին դասախոսներին: «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՀՀ ՈԱՇ-Ի ՄԻՋԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ»-ի և ՀԳՊԱ գնահատման հայեցակարգի հետ միասին ձեռնարկը նպատակ ունի համակարգել ՀԳՊԱ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) և ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) ու արտաքին շահակիցների պահանջների համապատասխանեցման գործընթացը, ինչպես նաև երաշխավորել ՀԳՊԱ-ում մշակվող նոր ՄԿԾ-երի համապատասխանեցվածությունը, որակը և միջազգայնացումը: Ձեռնարկում մանրամասն նկարագրվում է ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացը ՀԳՊԱ-ում ներառյալ՝

- աշխատանքային խմբերի ձևավորումը
- միջազգային փորձի ուսումնասիրությունը
- համապատասխան ոլորտի հիմնական շահակիցների կարիքների վերհանումը
- ՄԿԾ-ի առաքելության, նպատակների, խնդիրների և ուսումնառության ակնկալվող արդյունքների սահմանումը
- ՀՀ որակավորումների ազգային շրջանակի, շահակիցների կարիքների և ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների համապատասխանեցումը (ուղղահայաց համապատասխանեցման I փուլ)
- ՄԿԾ-ի ուսումնական պլանի, դասընթացների բովանդակության և ուսումնառության արդյունքների մշակումը
- ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների և դրա բաղադրիչների ուսումնառության արդյունքների համաձայնեցումը (ուղղահայաց համապատասխանեցման II փուլ)
- ՄԿԾ-ի բաղադրիչների (դասընթացների, մոդուլների) դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանության սահմանումը (հորիզոնական համապատասխանեցում)
- ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսների սահմանումը ու առկայության գնահատումը
- համալսարանական մակարդակում և հիմնական շահակիցների հետ ՄԿԾ-ի քննարկումը
- ՄԿԾ-ի վերջնական հաստատումը

Փաստաթղթում որպես հավելվածներ բերված են նաև բոլոր նշված գործընթացների համար անհրաժեշտ ձևաչափերը:

2017 թվականին մշակվել և տպագրվել է նաև ՀԳՊԱ-ի 2017-2018 ուսումնական տարվա ուսանողի ձեռնարկը:

ՀԳՊԱ-ում իրականացվել են տարբեր ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումներ՝ կրթական ծրագրերի և ուսումնառության արդյունքների մշակման վերաբերյալ:

Գ. Ուսումնական միջավայրի բարելավում

- Գրաֆիկա մասնագիտության թվային գրաֆիկա առարկան արդյունավետ իրականացումը ապահովելու նպատակով Կերպարվեստի ֆակուլտետի համակարգչային լաբորատորիան համալրվել է 4 գրաֆիկայի պլանշետներով:
- Ավարտվել է ՀԳՊԱ մեծ դահլիճի վերանորոգման գործընթացը, 2017 թվականի ՀԳՊԱ-ի ուսանողների դիպլոմային աշխատանքների պաշտպանությունները կազմակերպվել են նոր դահլիճում: Այսուհետ դահլիճում կկազմակերպվեն նաև ՀԳՊԱ-ի կողմից կազմակերպվող կոնֆերանսները և բազմաբնույթ այլ միջոցառումներ:
- Եվրոպայի խորհրդի Երևանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում մշակվել են «ՀԳՊԱ-ի վարչական կազմի էթիկայի սկզբունքներ», «ՀԳՊԱ պրոֆեսորադասախոսական կազմի էթիկայի կանոնագիրք», «ՀԳՊԱ ուսանողների էթիկայի կանոնագիրք», «Էթիկայի և բողոքների քննման հարցերով հանձնաժողովի կանոններ» և «ՀԳՊԱ շահերի բախման քաղաքականություն» փաստաթղթերի նախագծերը, որոնք նախատեսվում է քննարկման և հաստատման դնել 2018 թվականի ընթացքում:

Դ. Որակավորումներ

2016-2017 ուսումնական տարում Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան, Գյումրու և Դիլիջանի ստորաբաժանումները ավարտել են 224 շրջանավարտ, որոնցից 184-ը բակալավրի կրթական աստիճանով և 40-ը՝ մագիստրոսի կրթական աստիճանով: Պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովները գրանցել են ՀԳՊԱ-ի շրջանավարտների բավական բարձր մակարդակը, ինչը արտահայտվում է ավարտական ատեստավորման արդյունքներով.

Բակալավրի կրթական աստիճան

Մասնագիտությունը	Ուսանողների ընդհանուր թիվը	Գնահատականը*						
		A	B	C	D	E	FX	W
Դիզայն	33	7	20	5	-	1	-	-
Հագուստի մոդելավորում	32	12	17	2	-	1	-	-
Համակարգչային գրաֆիկա	17	12	5	-	-	-	-	-
Կիրառական արվեստ	15	13	2	-	-	-	-	-
Քանդակագործություն	7	3	4	-	-	-	-	-
Գեղանկար	21	4	16	1	-	-	-	-
Գրաֆիկա	13	11	2	-	-	-	-	-
Կերպարվեստի պատմություն և տեսություն	5	4	1	-	-	-	-	-
Ընդամենը	**143**	**66**	**67**	**8**	**-**	**2**	**-**	**-**
Գյումրու ստորաբաժանում								
Դիզայն	11	6	3	2	-	-	-	-
Հագուստի մոդելավորում	13	7	6	-	-	-	-	-
Կիրառական արվեստ	1	1	-	-	-	-	-	-
Քանդակագործություն	2	1	-	1	-	-	-	-
Գեղանկարչություն	3	1	2	-	-	-	-	-
Գրաֆիկա	4	4	-	-	-	-	-	-
Արվեստաբանություն	3	1	2	-	-	-	-	-
Ընդամենը	**37**	**21**	**13**	**3**	**-**	**-**	**-**	**-**
Դիլիջանի ստորաբաժանում								
Կիրառական արվեստ	4	3	1	-	-	-	-	-
Ընդամենը	**4**	**3**	**1**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Ընդամենը	***184***	***90***	***81***	***11***	***-***	***2***	***-***	***-***

Մագիստրոսի կրթական աստիճան

Մասնագիտությունը	Ուսանողների ընդհանուր թիվը	Գնահատականը*						
		A	B	C	D	E	FX	W
Դիզայն	12	9	3	-	-	-	-	-
Հագուստի մոդելավորում	2	1	1	-	-	-	-	-
Համակարգչային գրաֆիկա	4	4	-	-	-	-	-	-
Կիրառական արվեստ	1	1	-	-	-	-	-	-
Քանդակագործություն	2	2	-	-	-	-	-	-
Գեղանկարչություն	3	3	-	-	-	-	-	-
Գրաֆիկա	4	4	-	-	-	-	-	-
Արվեստաբանություն	7	4	3	-	-	-	-	-
Ընդամենը	**35**	**28**	**7**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Գյումրու ստորաբաժանում								
Գեղանկարչություն	4	4	-	-	-	-	-	-
Գրաֆիկա	1	1	-	-	-	-	-	-
Ընդամենը	**5**	**5**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Ընդամենը	***40***	***33***	***7***	**-**	**-**	**-**	**-**	**-**

* Անցողիկ գնահատականներ՝ A (90%-100%), B (80%-89%), C (70%-79%), D (65%-69%), E (60%-64%): Անբավարար՝ FX (մինչև 59%): Չներկայացած՝ W:





Դ. Լրացուցիչ ծառայություններ

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան հիմնական կրթական ծրագրերից զատ իրականացնում է նախապատրաստական դասընթացներ՝ ապագա դիմորդների և բոլոր այն քաղաքացիների համար, ովքեր ցանակություն ունեն գիտելիքներ և հմտություններ ձեռք բերել կերպարվեստի, կիրառական արվեստի և դիզայնի ոլորտներում: 2017 թվականի ընթացքում նախապատրաստական դասընթացներում ներգրավված են եղել շուրջ 50 մասնակից:

Հիմնական կրթական ծրագրից բացի ՀԳՊԱ-ի ուսանողների համար կազմակերպվում են նաև անվճար ֆակուլտատիվ դասընթացներ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իտալերեն, իսկ օտարերկրյա ուսանողների համար՝ նաև հայերեն լեզուներով: Ֆակուլտատիվ դասընթացներում 2017 թվականի ընթացքում ներգրավված են եղել շուրջ 168 ուսանող: Անվճար դասընթացներում ներգրավված ուսանողների վիճակագրական պատկերը հետևյալն է.

2015թ	2016թ	2017թ
143	185	168

ՆՊԱՏԱԿ III. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՈՒՄ

Հետազոտության ոլորտում հաշվետու տարվա ընթացքում կատարվել են բավական լուրջ աշխատանքներ: ՀԳՊԱ-ի դասախոսների կողմից հայաստանյան և միջազգային գիտական ժողովածուներում և հանդեսներում հրատարակել են շուրջ 85 գիտական հոդվածներ, հրատարակվել է 3 մենագրություն, 11 ուսումնամեթոդական ձեռնարկ: Կազմվել և տպագրության ընթացքում է ՀԳՊԱ-ի «Տարեգիրք» արվեստագիտական և հումանիտար հետազոտությունների հերթական ժողովածուն, որում ընդգրկված են 21 գիտական հոդվածներ, այդ թվում՝ 2 ասպիրանտի, 3 մագիստրոսի և 2 բակալավրիատի շրջանավարտի:

Ակադեմիան 2014 թվականից մասնակցում է ՏԵՄՊՈՒՍ-ի VERITAS «Զալցբուրգի սկզբունքների հիման վրա կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում» դրամաշնորհային ծրագրին: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի հետբուհական կրթական համակարգը՝ այն համապատասխանեցնելով եվրոպական որակավորումների շրջանակին և Զալցբուրգյան սկզբունքներին: Ծրագրում ներգրավված են շուրջ 20 բարձրագույն ուսումնական հաստատություններ և կրթական կառույցներ ինչպես Հայաստանից, այնպես էլ եվրոպական մի շարք երկրներից: Ծրագիրն ավարտվել է այս տարվա դեկտեմբերին: Այս տարվա ընթացքում ավարտին է հասցվել ՀԳՊԱ արվեստի պատմության, կերպարվեստի, դիզայնի և կիրառական արվեստի հետազոտության համար նոր ասպիրանտական ծրագրի նախագիծը, որն ընդգրկում է՝

- ընդունելության պայմանները և պահանջները,
- հետազոտության ընթացքը,
- գիտական ղեկավարի, ուսանողի և բուհի փոխադարձ հարաբերությունները և պարտավորությունները,
- ավարտական փուլի և ատենախոսության պաշտպանության գործընթացի շուրջ համակողմանի, բարենորոգված ու ըստ միջազգային չափանիշների մշակված դրույթներ, ինչպես նաև
- ըստ նոր ծրագրի կազմված և մշակված ուսումնական պլանը:

Արվեստի ոլորտում հետազոտություն կատարելու և թեկնածուական ատենախոսությունը այդ նախագծի շուրջ պաշտպանելու հնարավորության ընձեռնման առումով այս ծրագիրը միանգամայն նորույթ է Հայաստանում: Ծրագրի նախագիծը քննարկման և հաստատման կդրվի 2018 թվականի ընթացքում: Ծրագրի ընդունման և հաստատման դեպքում այն կարող է օրինակ ծառայել արվեստի մյուս բուհերի համար:

ՀԳՊԱ հետազոտական կենտրոնի կողմից մշակվել և ամբիոնների քննարկմանն են ներկայացվել ակադեմիայի հետազոտական առաջնահերթությունների, թեմաների և ուղղությունների թիրախավորված սահմանումները, կազմակերպվել են թվով 3 դասախոսություններ, զեկուցում-քննարկումներ՝ «Հանդիպումներ» և «Ճանաչողական ճամփորդություններ» շարքերի շրջանակներում, որոնց մասնակցել են ՀԳՊԱ դասախոսները հրավիրված մասնագետներ: Հետազոտական կենտրոնի ջանքերով համագործակցության պայմանագիր է ստորագրվել Չեխիայի Մազարիկ համալսարանի արվեստի պատմության ֆակուլտետի հետ: Կենտրոնի նախաձեռնությամբ ՀԳՊԱ երկու ուսանող ընդգրկվել է Անի-Պեմզա միջազգային մշակութային ծրագրում: Կենտրոնի տնօրենը դասախոսությամբ է հանդես եկել Վենետիկի Կա-Ֆոսկարի համալսարանում՝ հայ արվեստի թեմայով, ինչպես նաև մասնակցել է Գետտի հիմնադրամի կողմից ֆինանսավորած Connecting Art Histories մեծ միջազգային հետազոտական-ուսումնական ծրագրի հերթական ճամփորդություններին՝ Վրաստան և Իսրայել:

Արդեն 4-րդ տարին է ինչ «Աշխարհայացքների պատմություն» և «Կինոգիտություն» առարկաների շրջանակներում ՀԳՊԱ է հրավիրվում և 1 ամբողջ կիսամյակի ընթացքում դասախոսություններ է կարդում փիլիսոփայական գիտությունների դոկտոր, արվեստագետ՝ Լեոնարդո Ֆիլաստոն Իտալիայից:

Ակադեմիայի 4 դասախոսներ մասնակցել են միջազգային գիտաժողովների Օքսֆորդում, Մոսկվայում, Բաթումիում, ինչպես նաև մի շարք հայաստանյան գիտաժողովների: 2017 թվականը արդյունավետ է եղել նաև երիտասարդ հետազոտողների համար: Արվեստաբանություն մասնագիտության 2 մագիստրոսներ զեկուցումներով հանդես են եկել Բաթումիում կազմակերպված միջազգային գիտաժողովում:

2017թ. ակադեմիայի 3 դասախոսի շնորհվել է դոցենտի գիտական կոչում:

Ակադեմիայի 2 ասպիրանտ հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսությունները և ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրանց շնորհվել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Ներկայում ակադեմիայում սովորում է 7 ասպիրանտ և 3 հայցորդ:

ՆՊԱՏԱԿ IV. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Ուսանողների շարժունությունը ապահովելու նպատակով համագործակցության նոր պայմանագրեր են կնքվել հետևյալ ուսումնական հաստատությունների հետ՝

- Թուրինի Կիրառական արվեստի և դիզայնի ինստիտուտ (Իտալիա)
- Մասարիկովի համալսարան (Չեխիա)
- Կլուչ – Նաբոկա քաղաքի Արվեստի և դիզայնի համալսարան (Ռումինիա)
- Էգեր քաղաքի համալսարան (Հունգարիա)
- Լինսի Կաթոլիկ համալսարան (Ավստրիա):

2017-2018 ուսումնական տարում արտասահմանցի ուսանողները կազմում են 5.5%, որից 1.05%-ը Ասիայից, 0.82%-ը՝ Իրանից, 0.47%-ը՝ Լիբանանից, 0.82%-ը՝ Վրաստանից, 1.65%-ը՝ Ռուսաստանից, 0.24%-ը՝ Ուկրաինայից, և 0.47%-ը Չինաստանից:



Անդրադառնալով արտասահման մեկնող ուսանողներին՝ պետք է նշել, որ գործող ուսանողների փոխանակման ծրագրի շրջանակներում 2017-2018 ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կիսամյակներում ուսումը շարունակելու նպատակով 1 ուսանող մեկնել է Պերուջայի

համալսարան և 8-ը՝ Սանկտ–Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիա (Ռուսաստան):

Սանկտ–Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիայի հետ համագործակցության շրջանակներում ՀԳՊԱ-ում մեկ կիսամյակով դասավանդել են 2 դասախոս, իսկ ՀԳՊԱ-ից Սանկտ–Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիայում դասավանդել է մեկ դասախոս:

Միջազգային համագործակցությանը նպաստելու նպատակով 2017 թվականի դեկտեմբերի դրությամբ գործում են պայմանագրեր արվեստի օտարերկրյա 23 բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, որոնք վերաբերվում են պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակմանը, համատեղ թեմատիկ ցուցահանդեսների, համաժողովների, աշխատաժողովների կազմակերպմանը:

ՆՊԱՏԱԿ V. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հասարակայնության հետ կապերի ոլորտում 2017 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ՀԳՊԱ-ում, Գյումրու ու Դիլիջանի ստորաբաժանումներում և այլ վայրերում, որոնցից առավել հատկանշական են.

1. **Գծանկարի և գունանկարի ամբիոնի ցուցահանդես:** Ամբիոնի դասախոսական կազմն իրականացրել է իր աշխատանքների հաշվետու ցուցահանդեսը:
2. **«Մուսա. Փարիզյան տպավորություններ» ցուցահանդես:** Տեղի է ունեցել ցուցահանդես նվիրված ֆրանկոֆոնիայի միջազգային օրվան:
3. **«…Մենք իր կյանքի միջով անցանք, ինքը՝ մեր կյանքի»:** Ազգային պատկերասրահի Որմնանկարների սրահում տեղի է ունեցել Սյուզաննա Փիլոսյանի «Անկրկնելի Իսաբեկյանը» գրքի շնորհանդեսը:
4. **«Կոմիքսը (պատկերապատում) որպես ոճ, սցենարից մինչև իլյուստրացիա» խորագրով դասախոսություն:** ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատունը և ՀԳՊԱ-ն համատեղ կազմակերպել են հանդիպում ֆրանսիացի գրող, լրագրող, սցենարիստ, հրատարակիչ Ժիլ Կրեմերի հետ, ով ներկայացրել է «Կոմիքսը (պատկերապատում) որպես ոճ, սցենարից մինչև իլյուստրացիա» խորագրով դասախոսություն:
5. **«Գեղեցկության իմաստավորումը»:** Ճապոնիայից ժամանած պրոֆեսոր Միդորի Յամադան և նրան աշակերտած մոսկվայաբնակ Օլգա Սալիվանովան Ակադեմիայի դահլիճում անցկացրել են իկեբանայի և սումիէ գեղանկարչության վարպետության երկօրյա դասեր:
6. **«Աշխատանք փնտրելը նույնպես աշխատանք է»:** Կարիերայի կենտրոնն ուսանողներին և շրջանավարտներին առավել հեշտությամբ աշխատաշուկա մուտք գործելու վերաբերյալ խորհրդատվութուն տրամադրելու նպատակով իրականացրել է «Ինչպե՞ս գտնել աշխատանք և արդյունավետ ներկայանալ հարցազրույցի» դասընթացը:
7. **«Ավանդույթների պահպանման և զարգացման ճանապարհով»:** ՀԳՊԱ դասախոս Հասմիկ Ղազարյանը բուհի շրջանավարտների և Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի ուսանողների հետ իրականացրել է կարպետի և գոբելենի ցուցադրություն:

8. **Ցուցահանդես «Քանդակագործություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների կողմից:** «Քանդակագործություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողներն իրականացրել են իրենց վերջին 1.5 տարվա աշխատանքների ցուցահանդեսը «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
9. **«Հայաստանը՝ Սանկտ Պետերբուրգի նկարիչների հայացքով»:** Սանկտ Պետերբուրգի Ա. Շտիգլիցի անվան գեղարվեստաարդյունաբերական ակադեմիայի դասախոսներ Լևոն Բեյբությանը, Կոնստանտին Կոնստանտինովը և նկարչության ուսուցչուհի Օլգա Վեսելովան իրականացրել են ցուցահանդես հայստանյան իրենց տպավորությունների վերաբերյալ «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
10. **«Պարզության գրավչությունը»:** ՀԳՊԱ «Գրաֆիկա» կրթական ծրագրի ավարտական կուրսի ուսանողուհի Վիկտորյա Շահբազյանը իրականացրել է դիպլոմային աշխատանքի («Արվեստանոց») նախապատրաստական էսքիզների ցուցադրությունը «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
11. **«Երկուսը մեկ տեղ»-իրարամերժ մոտեցումներ մեկ վայրում:** «Քանդակագործություն» կրթական ծրագրի 2017 տարվա շրջանավարտներ Նարեկ Կնյազյանը և Արտակ Մաթևոսյանը իրականացրել են «Երկուսը մեկ տեղ» խորագրով ցուցահանդես «Ալբերտ և Թովէ Բոյաջյան ցուցասրահում:
12. **«Հայերը Վերսալի պալատում» հանդիպում-դասախոսություն:** Ֆրանսահայ մաթեմատիկոս, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր, պատմաբան, հայագետ Կլոդ Մութաֆյանի հետ տեղի է ունեցել հանդիպում-դասախոսություն:
13. **Կուրսային աշխատանքների ցուցադրություն:** «Համակարգչային գրաֆիկա» ամբիոնի 2016-2017թթ. կուրսային աշխատանքները ներկայացվել են «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
14. **«Որտեղ երեխա, այնտեղ՝ ուրախություն»:** Հունիսի 1-ին տեղի է ունեցել ՀԳՊԱ աշխատակիցների երեխաների և թոռնիկների աշխատանքների ցուցահանդեսը «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:

15. **Խեցեգործական աշխատանքների ցուցահանդես:** Տեղի է ունեցել ՀԳՊԱ «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի ուսանողների աշխատանքների ցուցահանդեսը «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
16. **Մեպտեմբերյան առաջին ցուցահանդես:** Տեղի է ունեցել «Գրաֆիկա» կրթական ծրագրի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Ռիմա Նանյանի ցուցահանդեսը «Ալբեր և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
17. **Իտալերենի շաբաթը Գեղարվեստի պետական ակադեմիայում -Ֆելիչի Վարինիի ստեղծագործական մեթոդը:** Ծագումով իտալացի, Շվեյցարիայում ծնված և ներկայում Փարիզում հաստատված Ֆելիչի Վարինին ներկայացրել է եռաչափ տարածության մեջ ստեղծած հարթ գրաֆիկական պատկերներ՝ օգտագործելով օպտիկական խաբկանքի տեխնիկան, որը կոչվում է անամորֆոզ՝ հեռանկարի և պրոյեկցիայի վիզուալ խախտում:
18. **Հայ – Ճապոնական կերպարվեստի զուգորդումներ:** Տեղի է ունեցել հայ-ճապոնական ցուցահանդես՝ նվիրված երկու երկրների դիվանագիտական հարաբերությունների 25-ամյակին:
19. **Հագուստի մոդելավորման ամբիոնի հաշվետու ցուցահանդես:** Տեղի է ունեցել **«**Հագուստի մոդելավորում» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողների աշխատանքների ցուցահանդեսը՝ կոմպոզիցիա, ասեղնագործություն, բեմական հագուստ, աշխատանք նյութի վրա:
20. **«Մոսկվան հայ նկարիչների հայացքով»:** Տեղի է ունեցել «Մոսկվան հայ նկարիչների հայացքով» խորագրով «Գեղանկարչություն» և «Գրաֆիկա» կրթական ծրագրերի 40 ուսանողների աշխատանքների ցուցահանդեսը «Մոսկվայի տան» մշակութագործարարական կենտրոնի ցուցասրահում:

ՆՊԱՏԱԿ VI. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Կարևորելով ՀԳՊԱ-ում իրականացվող յուրաքանչյուր գործընթացում արդյունավետության ապահովումը և որակյալ կրթություն մատուցելու տեսանկյունից հասարակության առջև պատասխանատվությունը՝ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի որակի կառավարման համակարգը շարունակաբար բարելավվում է: 2017թ.-ին մշակվել է ՀԳՊԱ որակի կառավարման համակարգը, որը հստակորեն արտահայտում է բուհում իրականացվող գործընթացները, դրանց պատասխանատուներին և ներգրավված կողմերը, ինչպես նաև դրանցում որակի ապահովման մեխանիզմները ու հիմնական գործիքները:

2017թվականը նշանակալի էր բուհի հավատարմագրման գործընթացի մեկնարկով: ՀԳՊԱ-ն դիմել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»-ին (այսուհետ՝ ՈԱԱԿ) ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով: ՈԱԱԿ-ին զուգահեռ ՀԳՊԱ-ում աուդիտ է իրականացրել նաև գերմանական «ԱՍԻԻՆ» հավատարմագրման գործակալությանը: ՀԳՊԱ-ի տարբեր ստորաբաժանումներից ձևավորված աշխատանքային խմբի կողմից իրականացվել է ինքնավերլուծություն համաձայն «ՈԱԱԿ» և «ԱՍԻԻՆ» գործակալությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման համար սահմանված չափանիշերի: Նշված երկու հավատարմագրման գործակալությունների կողմից ստեղծվել են փորձագիտական խմբեր, որոնք ուսումնասիրելով ՀԳՊԱ-ի կողմից պատրաստված ինքնավերլուծությունները, փորձագիտական այց են կատարել ՀԳՊԱ՝ տեղում ուսումնասիրելով բուհի ինստիտուցիոնալ գործունեությունը և որակի ապահովման գործող համակարգը: Ինքնավերլուծությունների և այցերի արդյունքների հիման վրա փորձագետների կողմից կազմվեցին փորձագիտական զեկույցներ: Զեկույցներում նշված թերությունները և թույլ կողմերը բարելավելու նպատակով ՀԳՊԱ-ի աշխատանքային խմբի կողմից կազմվեց բարելավման պլան-ժամանակացույց: ՈԱԱԿ-ի եզրակացությունը և ՀԳՊԱ բարելավման պլան-ժամանակացույցը

ներկայացվել են ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողով: Հավատարմագրում ստանալու վերաբերյալ որոշումը և հավատարմագիրը ՀԳՊԱ-ին կտրամադրվեն 2018 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում:

Հաշվի առնելով բարձրագույն կրթության ներկայիս պահանջները՝ ՀԳՊԱ-ն սկսել է աշխատանքներ տանել նաև կրթության 3-րդ աստիճանի որակի ապահովման ուղղությամբ, մասնավորապես իրականացրել է ինքնագնահատում/ինքնավերլուծություն VERITAS դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որի արդյունքում ստացած փորձագիտական խորհրդատվությունները հիմք կդառնան 3-րդ աստիճանում որակի ապահովման աշխատանքների արդյունավետ պլանավորման և իրականացման համար: Հաշվի առնելով կրթության 3-րդ աստիճանում որակի ապահովման անհրաժեշտությունը՝ 2017թ.-ին բուհն անդամակցել է նաև մեկ այլ դրամաշնորհային ծրագրի՝ «C3QA», որն ուղղված է 3-րդ աստիճանում որակի ապահովման համակարգի ստեղծմանը և ներդրմանը:

Որակի կառավարման գործընթացում իր գործառույթների շրջանակներում ակտիվ գործունեություն է ծավալել ՀԳՊԱ Որակի ապահովման կենտրոնը: Վերջինը համակարգել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացները և ակտիվորեն մասնակցել է վերոնշյալ փաստաթղթերի մշակման գործընթացներին: Կենտրոնը վերանայել է առկա ՈԱ գործիքները (Հետազոտական գործունեության արդյունավետության գնահատում, դասընթացի արդյունավետության գնահատում), մշակել է մեկ նոր գործիք, Ուսումնական վարչության հետ համատեղ ամբիոններին տրամադրել է աջակցություն կրթական ծրագրերի վերանայման աշխատանքներում, իրականացրել է մի շարք վերապատրաստումներ «Ուսանողական համայնք»-ի համար, ինչպես նաև բուհի տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման նպատակով իրականացրել է հարցումներ, մասնավորապես՝

- դասընթացի արդյունավետության գնահատում բոլոր կրթական ծրագրերում,
- ՀԳՊԱ առկա ռեսուրսների ու մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատում ուսանողների և դասախոսների շրջանում,

- ՀԳՊԱ-ի վերաբերյալ դիմորդների տեղեկացվածության և տեղեկության տարածման միջոցների արդյունավետության գնահատում դիմորդների շրջանում,
- ՀԳՊԱ ընդունելության քննությունների արդյունավետության գնահատում առաջին կուրսի ուսանողների շրջանում,
- հետազոտական գործունեության գնահատում դասավանդող և ասպիրանտուրայի ուսանողների շրջանում,
- օտար լեզվի իմացության վերաբերյալ վարչական, դասավանդող և ուսումնաօժանդակ կազմի շրջանում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հանդիսանալով պետական հաստատություն և ձևավորելով բյուջեն թե՛ պետական և թե՛ հասարակության կողմից տրամադրվող ֆինանսներից՝ ՀԳՊԱ-ն այդ ֆինանսները բաշխելիս հաշվետու է հասարակությանը և կառավարությանը:

2017 թվականին ՀԳՊԱ-ի եկամուտները ձևավորվել են պետ. բյուջեի հատկացումներից, ուսանողների վարձավճարներից և այլ մուտքերից: ՀԳՊԱ-ի ծախսերը կատարվում են ըստ նախահաշվի, որը կազմվում է՝ հիմք ընդունելով բուհի կառուցվածքային ստորաբաժանումներից ստացած պահանջագրերը: Հատուկ տողով գումար է հատկացվում ուսանողական խորհրդին՝ ցուցահանդեսների, էտյուդների կազմակերպման համար:

ՄՈՒՏՔԵՐ **882.915.683 ՀՀ դրամ**

1	Պետական բյուջե	250.027.500	28.32%
2	Ուսանողների վճարներ	232.211.200	26.3%
3	Նախապատրաստական դասընթացներ	9.415.000	1.07%
4	Միջազգային աղբյուրներից ստացված ֆինանսավորում	387.100.983	43.84%
5	Այլ մուտքեր	4.161.000	0.47%



ԾԱԽՍԵՐ **519.243.790 ՀՀ դրամ**

1	Աշխատավարձ	385.825.560	74.3%
2	Պետական հարկեր	13.969.000	2.7%
3	Գնումներ	33.481.765	6.4%
4	Ծառայություններ	68.069.315	13.1%
5	Գործուղում	1.162.140	0.2%
6	Կրթաթոշակ	13.954.200	2.7%
7	Ուսանողական խորհուրդ	2.050.990	0.4%
8	Այլ ծախսեր	730.820	0.2%



Ուսումնական գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար 2017 թվականին ՀԳՊԱ-ի մասնաշենքերում կատարվել են շենքի պահպանման աշխատանքներ, ՀԳՊԱ-ն համալրվել է ուսումնական գույքով, ձեռք են բերվել սարքեր և սարքավորումներ, գրադարանը հագեցվել է մասնագիտական գրականությամբ:

Գյումրու ստորաբաժանման ֆինանսատնտեսական գործողությունները իրականացվել են համաձայն տարեկան պլանավորման՝ ըստ անհրաժեշտ, օգտակար և այլ ծախսերի: Այդ թվում անհրաժեշտ ծախսեր են՝ աշխատավարձերը և սոցիալական պարտավորությունները պետության և աշխատակիցների հանդեպ, ինչը կազմում է ընդհանուր բյուջեի 73%-ը, նաև պահանջվող գրասենյակային պարագաները, կոմունալ ծախսերի հատվածները: Առանձին կետով վճարումներ են կատարվում գույքի և սարքավորումների, տրանսպորտային, գործուղումների, ընթացիկ վերանորոգումների համար: Այս ամենը վկայում է, որ մասնաճյուղն իր ունեցած միջոցները ծախսում է դինամիկ համամասնությամբ, չնայած չի կարողանում իրականացնել զարգացման և հեռանկարային ծախսեր: Այս կարգի ծախսերի համար բուհը

նախատեսում է ընդլայնել ու զարգացնել համագործակցական հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերն ու նախագծերը:

Միջազգային աղբյուրներից ստացված ֆինանսավորում

2017 թվականի ընթացքում Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան ֆինանսավորվել է նաև միջազգային աղբյուրից՝ Եվրոմիության «Տեմպուս» և Էրազմուս+ դրամաշնորհային ծրագրի սահմաններում:

ՄՈՒՏՔԵՐ **387.100.983 ՀՀ դրամ**

1	Տեմպուս	176.643.315	45.6%
2	Էրազմուս+	210.457.668	54.4%

ՀԳՊԱ-ում իրականացվող «ԳՈՎԵՌՆ», «ՎԵՐԻՏԱՍ», «ԸԼԱՅՆ», «ՊԻԿԱՍԱ» և «ԷՍՊԱՔ», Եվրոմիության ՏԵՄՊՈՒՍ դրամաշնորհային ծրագրերի, ինչպես նաև «ԻՆՔԼՈՒԺՆ» և «ՍԻ 3 ՔՈՒ ԷՅ» Էրազմուս+ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 2017 թվականի ընթացքում ֆինանսական մուտքերը և ծախսերը հետևյալն են.

ՄՈՒՏՔԵՐ **387.100.983 ՀՀ դրամ**

1.	ԳՈՎԵՌՆ	131.923.522	34.1%
2.	ՎԵՐԻՏԱՍ	9.124.503	2.4%
3.	ԸԼԱՅՆ	18.532.259	4.8%
4.	ԷՍՊԱՔ	17.063.031	4.4%
5.	ԻՆՔԼՈՒԺՆ	209.078.110	54%
6.	ՍԻ 3 ՔՈՒ ԷՅ	1.379.558	0.3%



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԾԱԽՍԵՐ **141.600.037 ՀՀ դրամ**

1.	ԳՈՎԵՌՆ	58.519.036
2.	ՎԵՐԻՏԱՍ	10.009.630
3.	ԸԼԱՅՆ	24.897.559
4.	ՊԻԿԱՍԱ	16.460.293
5.	ԷՍՊԱՔ	19.622.358
6.	ԻՆՔԼՈՒԺՆ	10.711.603
7.	ՍԻ 3 ՔՈՒ ԷՅ	1.379.558



ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Այսպիսով, կարելի է նշել, որ 2017 թվականը եղել է բավականին արդյունավետ թե կառավարման համակարգի, և թե ուսումնական գործընթացի բարելավման տեսանկյունից: ՀԳՊԱ-ն բավականաչափ ներդրումներ է իրականացրել բուհի զարգացման ուղղությամբ:

Սակայն, բավականին լուրջ մարտահրավեր են առաջանում, երբ խոսքը գնում է միջազգային չափանիշներին համահունչ կրթության տրամադրմանը: Չնայած արտաքին աղբյուրներից ռեսուրսների ձեռքբերման հարցում ՀԳՊԱ-ի բոլոր ջանքերին՝ դեռ առկա են շոշափելի խնդիրներ հիմնականում հետևյալ հարցերում՝

- ՀԳՊԱ-ի ֆիզիկական տարածքի վերանորոգում և համապատասխան հարմարությունների ստեղծում,
- պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստում,
- շենքային պայմանների ընդլայնում:

Ամփոփելով՝ ՀԳՊԱ-ն միշտ պատրաստակամ է և շարունակաբար ձգտում է բարելավել ուսումնագիտական ծառայությունների որակը և կշարունակի աշխատել նշված մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ: